# 4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

## 4.1. Վճարային հաշվեկշիռը 2017 թվականի հունվար-մարտին

Ըստ նախնական տվյալների, 2017 թվականի հունվար-մարտին ԼՂՀ վճարային հաշվեկշռի[1] ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 10201.4 մլն դրամ, որը 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 4171.1 մլն. դրամով:

### *ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը 2016-2017թթ.*

/մլն դրամ/

| | 2016թ.* | 2017թ. | Բացարձակ փոփոխությունը |
|---|---|---|---|
| **ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ** | **-6030,3** | **-10201,4** | **-4171,1** |
| **Կրեդիտ** | 15415,7 | 25236,6 | 9820,9 |
| **Դեբետ** | 21445,9 | 35437,9 | 13992,0 |
| **ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **-14475,3** | **-24372,8** | **-9897,5** |
| **Կրեդիտ** | 5914,5 | 10053,0 | 4138,5 |
| **Դեբետ** | 20389,8 | 34425,8 | 14036,0 |
| **ԱՊՐԱՆՔՆԵՐ** | **-13787,5** | **-20943,1** | **-7155,6** |
| **Կրեդիտ** | 5055,9 | 8575,0 | 3519,1 |
| **Դեբետ** | 18843,4 | 29518,1 | 10674,7 |
| *Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի* | *-13787,5* | *-20943,1* | *-7155,6* |
| **Կրեդիտ** | 5055,9 | 8575,0 | 3519,1 |
| **Դեբետ** | 18843,4 | 29518,1 | 10674,7 |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **-687,8** | **-3429,7** | **-2741.9** |
| **Կրեդիտ** | 858,6 | 1478,0 | 619,4 |
| **Դեբետ** | 1546,4 | 4907,7 | 3361,3 |
| Տրանսպորտ | -337,2 | -718,1 | -380,9 |
| Կրեդիտ | 513,9 | 439,1 | -74,8 |
| Դեբետ | 851,1 | 1157,3 | 306,2 |
| Ճանապարհորդություն | -410,4 | -3449,6 | -3039,2 |
| Կրեդիտ | 162,4 | 183,1 | 20,7 |
| Դեբետ | 572,8 | 3632,7 | 3059,9 |
| Այլ | 59,8 | 738,0 | 678,2 |
| Կրեդիտ | 182,3 | 855,7 | 673,4 |
| Դեբետ | 122,5 | 117,7 | -4,8 |
| **ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **-771,7** | **-820,2** | **-48,5** |
| **Կրեդիտ** | 252,2 | 100,7 | -151,5 |
| **Դեբետ** | 1023,9 | 920,9 | -103,0 |
| **ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **9216,8** | **14991,6** | **5774,8** |
| **Կրեդիտ** | 9249,0 | 15082,9 | 5833,8 |
| **Դեբետ** | 32,2 | 91,2 | 59,0 |
| **ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ** | **1528,7** | **632,9** | **-895,8** |
| **Կրեդիտ** | 1528,7 | 632,9 | -895,8 |
| **Դեբետ** | 0,0 | 0,0 | 0,0 |
| ***Զուտ վարկավորում(+) զուտ փոխառություն(-) ընթացիկ և կապիտալի հաշիվներից*** | *-4501,5* | *-9568,5* | *-5067,0* |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ** | **-7050,9** | **-13727,0** | **-6676,1** |
| ***Զուտ վարկավորում(+) զուտ փոխառություն(-) ֆինանսական հաշվից*** | *-7050,9* | *-13727,0* | *-6676,1* |
| **Ուղղակի ներդրումներ** | **-409,6** | **-188,6** | **221,0** |
| Զուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում | 0,0 | 0,0 | 0,0 |
| Զուտ պարտավորությունների ստանձնում | 409,6 | 188,6 | -221,0 |
| **Պորտֆելային ներդրումներ** | 0,0 | **0,0** | **0,0** |
| Զուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում | 0,0 | 0,0 | 0,0 |
| Զուտ պարտավորությունների ստանձնում | 0,0 | 0,0 | 0,0 |
| Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ | 0,0 | 0,0 | 0,0 |
| **Այլ ներդրումներ** | **-6641,4** | **-13538,4** | **-6897,0** |
| Զուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում | 29503,2 | 38762,6 | 9259,4 |
| Զուտ պարտավորությունների ստանձնում | 36144,6 | 52301,0 | 16156,4 |

| | 2016թ.* | 2017թ. | Բացարձակ փոփոխությունը |
|---|---|---|---|
| **Պահուստային ակտիվներ** | 0,0 | 0,0 | 0,0 |
| **Զուտ սխալներ և բացթողումներ** | **-2549,4** | **-4158,5** | **-1609,1** |

[1] ԼՂՀ ԱՎԾ 2015թ-ից սկսած իրականացրել է վճարային հաշվեկշռի վերահաշվարկ համաձայն ԱՄՀ կողմից առաջարկվող վճարային հաշվեկշռի ձեռնարկի նոր հրատարակության՝ «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքը ձեռնարկ 6»-ի (BPM-6) մեթոդաբանական պահանջի: Ըստ նոր BPM-6 ձեռնարկի փոփոխությունները իրականացվել են ինչպես դասակարգչային, այնպես էլ մեթոդաբանական առումով: **Դասակարգչային առումով** իրականացվել են հետևյալ հիմնական փոփոխությունները: Նախկին 2 հաշիվների՝ ընթացիկ հաշվի և կապիտալի ու ֆինանասական հաշվի փոխարեն այժմ հաշվեկշիռը կազմված է 3 հաշիվներից՝ ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ և ֆինանսական հաշիվ: Իր հերթին ընթացիկ հաշիվը ներկայումս կազմված է 3 ենթահաշիվներից՝ ապրանքների ու ծառայությունների (նախկինում դրանք առանձնացված էին), սկզբնական եկամուտների (նախկինում՝ եկամուտների) ու երկրորդային եկամուտների (նախկինում՝ընթացիկ տրանսֆերտներ) ենթահաշիվներից: Փոփոխվել է ֆինանսական հաշվում ակտիվների և պարտավորությունների հաշվառման կարգը: Ներմուծվել են «ակտիվների զուտ ձեռք բերում» և «պարտավորությունների զուտ ստանձնում» տերմինները: Ֆինանսական հաշվի հոդվածները գրանցվում են զուտ հիմքով յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության մասով, այսինքն նրանք արտացոլում եմ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր կրեդիտային և դեբետային փոփոխությունները: Այսպիսով դրական զուտ փոփոխությունը նշանակում է ակտիվների կամ պարտավորությունների աճ, իսկ բացասականը՝ ակտիվների կամ պարտավորությունների նվազում:

Վճարային հաշվեկշռում ներկայացված ապրանքների առևտուրը տարբերվում է արտաքին առևտրի վիճակագրության տվյալներից: Մասնավորապես, արտաքին առևտրում ներմուծումը ներառվում է ՍԻՖ գներով (ներառում են ապրանքի գինը, ապահովագրության և բեռնափոխադրման ծախսերը մինչև ներմուծող երկրի սահման), իսկ վճարային հաշվեկշռում՝ ՖՕԲ գներով (ներառում են ապրանքի գինն ու հարակից ծախսերը մինչև արտահանող երկրի սահման) :